ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ 2026 թվականից մոտ կրկնակի կավելանան կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների համար բնօգտագործման վճարների մասով պետական բյուջեի եկամուտները: Միայն սիգի օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափի ավելացման և վճարման սկզբունքի վերնայման արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կավելանան առնվազն 91.7 մլն դրամով՝ հաշվարկի հիմքում ունենալով սիգի արդյունագործական որսի 2024 թվականի համար սահմանված առավելագույն 679 տոննա չափաքանակը, իսկ նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի ավելացում չի ակնկալվում: